



Զահրատ

Լու

Առաւօտուն արթնցայ որ
Քովս պգտիկ լուն անկողնիս մէջ
Մինչեւ առաւօտ արիւն է ծծեր
Ուռած թնթուկի պէս ուռեր թնթեր

Լու

Պգտիկ լու
Ինչ պէտք կար այդքան ծծելու

Մատովս կամաց մը դպայ իրեն
Ու պայթեցաւ լուն անձայն անշշուկ
Լուն այդ պգտիկ լուն առաւօտ կանուխ
Անկողնիս մէջ պայթելով մեռաւ

Լու

Անխտեմ լու
Ինչ պէտք կար այդպէս ուռելու

Մինչդեռ կրնայիր հիմա պգտիկ լու
Ուրիշ լուերու հետ ոստոստել խումբ խումբ
Փոշիին արծաթն հողերուն ոսկին
Խմբովին ճանչնալ պատմել իրարու

Լու

Անփորձ լու

Ինչ պետք կար այդքան խմելու

Կրնայիր դիտել երկինքը կապոյտ

Անուշ երգերը լսել հովերուն

Կամ սիրաբանիլ արեւներու տակ

Հաճոյքին թափով ցատկել ցատկոտել

Լու

Պատանի լու

Ինչ պետք կար այդպէս ճաթելու

Եկար բանաստեղծի արիւն է ըսիր

Ծծեցիր ամբողջ գիշեր մը ծծեցիր

Գինովցա՞ր ըսէ լու իմ արիւնի հետ

Իմ երագներս ալ երեւցա՞ն քեզի

Լու

Բանաստեղծ լու

Ինչ պետք կար այդքան գինովնալու

Կրնայիր հիմա դեղին կատուի մը

Մետաքս նագերուն մէջ ծոյլ մրափել

Գորգին թաւիշին մէջ ընկողմանած

Սպասել գալիք աղուոր օրերու

Լու

Վաղամեռ լու

Ինչ պետք կար այդպէս շտապելու

Առաւօտ մ'ալ հիմա պիտի արթննամ

Որ լուն պգտիկ լուն անկողնիս մէջ չէ

Պիտի յիշեմ գինք տեսակ մը կարօտով
Ու պիտի խորհիմ

Անփառունակ լու

Ինչ պէտք կար այդպէս մեռնելու